ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-38/20

ք. Ապարան «11» 05 2020թ.

Ապարանի համայնքապետարանը, ի դեմս Կ. Եղիազարյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԵԳԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մարտիրոսյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի, Քուչակ վարչական տարածքի մանկապարտեզի տարածքի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30 օրացույցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը

վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2038142 (Երկու միլիոն երեսունութ հազար հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Աշխատանքների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԱՇxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի աշխատանքների կատարման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.
ՆԳ-ն աշխատանքի կատարման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.
ԱՇ-ն կատարված աշխատանքի առավելագույն միավորի գինն է.
Ք-ն կատարված աշխատանքի քանակն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ապարանի համայնքապետարան	*«ԵԳԱՐՇԻՆ» ՍՊԸ*
Ք. Ապարան, Բաղրամյան 26	*Ք.Երևան,Բաշինջաղյան փ.165/27*
ՀՎՀՀ 05022969	*<<Արարատբանկ>>ՓԲԸ*
ՀՀ ՖԻՆ. Նախ. Գործառնական վարչություն	*Հ/Հ 15100149351000*
ՀՀ 900452101158	*ՀՎՀՀ 01297519*
Համայնքի ղեկավար Կ. Եղիազարյան	Տնօրեն Ա.Մարտիրոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 3
«11» 05 2020թ. կնքված
ՀՀ-ԱՄ-ԱԲ-ԳՀԱՇՁԲ-38/20 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի												
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45451700	ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔՈՒՉԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	2038142	2038142	2038142	2038142	2038142	2038142	2038142	2038142	2038142	**2038142**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ապարանի համայնքապետարան
Ք. Ապարան, Բաղրամյան 26
ՀՎՀՀ 05022969
ՀՀ Ֆին. Նախ. Գործառնական վարչություն
ՀՀ 900452101158
Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԵԳԱՐՇԻՆ» ՍՊԸ
Ք.Երևան,Բաշինջաղյան փ.165/27
<<Արարատբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 15100149351000
ՀՎՀՀ 01297519
Տնօրեն Ա.Մարտիրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«11» 05 2024թ. կնքված
ՀՀ-ԱՄ-ԱԲ-ԳՀԱՇՁԲ-38/20 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔՈՒՉԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔՈՒՉԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	30 օրացույցային օրվա ընթացում
ԸՆԴԱՄԵՆԸ			**30 օր**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ապարանի համայնքապետարան
Ք. Ապարան, Բաղրամյան 26
ՀՎՀՀ 05022969
ՀՀ Ֆին. Նախ. Գործառնական վարչություն
ՀՀ 900452101158
Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԵԳԱՐՇԻՆ» ՍՊԸ
Ք.Երևան,Բաշինջաղյան փ.165/27
<<Արարատբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 15100149351000
ՀՎՀՀ 01297519
Տնօրեն՝ Ա.Մարտիրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 11 » թվականի
ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-38/20 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔՈՒՉԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

հ/հ	հիմնավորում	աշխատանքի,նյութի նկարագիրը	չ/մ	քանակը	արժեքները հհ/դրամ	
					միավորի	Ամբողջը
		ՀՈՂԱՅԻՆ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1.	1-1608 1-1615	2-րդ կարգի գրունտի մշակում և տեղափոխում մինչև 20 մ հեռավորության վրա,80 ձ.ուժ հզորության բուլդոզերով	1000 խմ	0.015	203826.3	3057.3
2.	1-1592 1-1593	2-3 դդ կարգի գրունտի մշակում,ավտոմեքենայի վրա բարձումով	1000 խմ	0.035	502605.71 միջինացված	17591.2
3.	Գ130Կ2 g=1200կգ/խմ	գրունտի տեղափոխում մինչև 2.0 կմ հեռավորության վրա	տոն	42.0	855.75	35941.8
		ՄԵՏԱՂԱԿԱՆ ՑԱՆՑԻՑ ՑԱՆԿԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1.	1-960 23-231	3-դդ կարգի գրունտի մշակում ձեռքով 100*0.2*0.15 մ չափսերով, բարձումով ինքնաթափ ավտոմեքենայի վրա	խմ	3.0	2873.76	8621.28
2.	Գ130Կ2 g=1700կգ/խմ	գրունտի տեղափոխում մինչև 2.0 կմ հեռավորության վրա	տոն	5.1	855.75	4364.3
3.	7-315 9-122	մետաղական ճաղացանց,2.0*1.2 մ չափսերով.ե/բետոնյա հենասյուների վրա առանց ցոկոլի, 0.3*0.3*0.45 մ չափսերի փոսերի 3-դդ կարգի գրունտում ձեռքով քանդմամբ և 60*60*2.0 մմ չափսի ուղղանկյուն մետաղական խողովակ	հատ	54.0	5026.64	271439.0

		ներից հենասյուների բուտաբետոնով տեղադրմամբ				
3.1	գլ5-351 ինֆ.տեղեկագրի գների վրա կիրառված է տրանսպորտի ծախսերի 1.0679 գործակիցը	մետաղական անկյունակ 40*40*3.0 մմ	գծմ	345.6	765.68	264619.0
3.2	գ5լ-426	մետաղական ցանց 50*50*2.0 մմ	քմ	150.0	682.38	102357.0
3.2	գլ9-655	ուղղ.մետաղական խողովակ 60*60*2.0 մմ	գծմ	97.2	1366.9	132862.6
3.4	գ2լ-27	ծանր բետոն Վ-7.5	խմ	1.209	23939.1	28956.73
3.5	գլ5-291	ամրալար A-1. D=8.0 մմ	գծմ	345.6	143.6	49628.1
3.6	գ6լ-432	փայտանյութ-տախտակ b=25 մմ	խմ	0.0728	131263	9569.0
3.7	գլ21-1845	էլեկտրող	կգ	14.04	1026.25	14408.0
3.8	գլ7-520	մեխ 40 մմ	կգ	1.24	445.31	553.0
3.9	գլ5-304	ամրան A 10	տոն	0.0235	245617	5771.9
4.	6-21	բուտաբետոնի տեղադրում 100*0.2*0.15 մ չափսերով,նախապես պատրաստված խրամատում	խմ	3.45	5098.57	17590.1
4.1	գլ2-27	ծանր բետոն Վ-7.5	խմ	1.932	23939.1	46250.3
4.2	գլ6-432	տախտակ 2.5 մմ հաստության	խմ	0.0897	131263.0	11774.2
4.2	գլ7-520	մեխ 40 մմ չափսի	կգ	3.1	445.31	1382.6
5.	8-168	շարվածք ուղիղ կտրվածքի 400*200*280 մմ տուֆ քարով,մեկ շարքով, 100.0 մ երկարության վրա	քմ	32.0	1246.4	39885.0
5.1	գլ4-241	ուղիղ կտրվածքի 400*200*280 մմ չափսի տուֆ քար	հատ	284	334.25	95194.4
5.2	գլ2-24	թեթև բետոն Վ-7.5	խմ	0.37	21179.6	7861.8
6.	9-122	ճաղավանդակով մետաղական 2.0*1.8 մ չափսերի դռան պատրաստում և տեղադրում,ըստ կից ներկայացվող սխեմայի	տոն	0.12	54558.33	6547,8
6.1	գլ9-655	մետաղական խողովակ 60*60*2.0 մմ	գծմ	5.6	1366.9	7654.64
6.1	գլ9-642	25*25*2.0 մմ	գծմ	20.0	561.7	11234.0
6.2	գլ5-347	մետաղական անկյունակ 30*30*3.0 մմ	գծմ	11.6	557.44	6466.30
6.3	շուկա	ծխնի	զույգ	3.0	1280.4	3841.2
6.4	գլ21-1845	էլեկտրող	կգ	1.2	1026.25	1231.5
6.5	շուկա	կողպեք դռան	հատ	1.0	2669.7	2669.7
7.	15-614	մետաղական ճաղավանդակով դռան և մետաղացանցով ցանկապատի յուղաներկում,ձեռքով 2-ու անգամ	քմ	142.0	730.4	103717.6
7.1	գլ20-1672	յուղաներկ	կգ	34.83	1145.8	39914
7.2	գլ20-1704	օլիֆ	լիտ	4.53	851.1	3856.5

	գլ20-1701	լուծիչ	կգ	2.83	1037.9	2939.6
		ԱՐՏԱՔԻՆ ԿՈՅՈՒՂՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄ				
1.	1-1559 1-1601	3-րդ կարգի գրունտի մշակում մինչև 025 խմ շերեփի տարողությամբ էքսկավատոր ով 25.0*0.3*0.6 մ և 2.0*2.0*5.0 մ չափսերով բարձումով ինքնաթափ ավտոմեքենայի վրա	խմ մշակ խմ բարձ.	15.7 10.3	594.93 482.59	9340.4 4970.7
2.	Գ130Կ2 g=1700կգ/խմ	գրունտի տեղափոխություն 2.0 կմ հեռավորության վրա	տոն	17.5	855.75	14975.7
3.	23-111 23-157	900*900 մմ չափսերի պոլիմերա-ավազային կոյուղահորերից 4.5 մ բարձրությամբ սեպտիկ հորի տեղադրում,պոլիմերա-ավազային կափարիչի 620*65 մմ չափսերի բացվածքի օղակով	հատ	5.0	351.0	1755
3.1	գլ21-1857	900*900 մմ չափսի պոլ/ավազային կոյուղահոր	հատ	5.0	25629.6	128148
3.2	գլ21-1859	պոլիմեր/ավազային կափարիչ 620*65 մմ բացվածքի օղակով	հատ	1.0	32037.0	32037.0
4.	7-317 9-122 15-614	սեպտիկ հորի ցանկապատում 2.0մ բարձրությամբ,1.2*2.0 մ չափսերի ցանցավոր մետաղական շրջանակներով,60*60*2.0 մմ չափսի ուղղանկյուն մետաղական խողովակներից հենասյուների վրա և յուղաներկում ձեռքով 2-ու անգամ	քմ	20.0	2241.75	44835.0
4.1	գլ5-351	մետաղական անկյունակ 40*40*3.0 մմ	գծմ	52.0	765.68	39815.0
4.2	գլ5-426	մետաղական ցանց 50*50*2.0 մմ	քմ	20.0	682.38	13647.0
4.3	գլ9-655	ուղղանկյուն մետ.խողովակ 60*60*2.0 մմ	գծմ	20.0	1366.9	27338.0
4.4	գլ5-291	ամրա լար A-1, D=8.0 մմ	գծմ	52.0	143.6	7468.7
4.5	գլ21-1845	էլեկտրոդ	կգ	2.6	1026.25	2668.0
4.6	գլ20-1672	յուղաներկ	կգ	4.92	1145.85	5637.0
4.7	գլ20-1704	օլիֆ	լիտ	0.64	851.1	544.0
4.8	գլ20-1701	լուծիչ	կգ	0.4	1037.99	415.0
4.9	շուկա	ծխնի	զույգ	3.0	640.74	1922.0
4.10	շուկա	կողպեք	հատ	1.0	2669.75	2669.75
4.11	գլ2-27	ծանր բետոն Վ-7.5	խմ	0.2	23939.11	4826.0
4.12	գլ5-304	ամրան A 10	տոն	0.004	245617	962.8
5.	Ե 9-2-8 Ե 17-30	D=110 մմ տրամագծով,պատի 2.8 մմ հաստությամբ պոլիքլորիդային խողովակաշարի տեղադրում նախապես փորված խրամատում,0.15 մ շերտի հաստությամբ ավազի վրա	գծմ	25.0	283.19	7079.8
5.1	գլ16-822	պոլիքլորիդային խողովակ d=110 մմ , l=3000 մմ,b=2.8 մմ	գծմ	25.0	772.09	19302.0

2	շուկա	անկյունակ պ/քլորիդային 120⁰ 110*2.8 մմ	հտ	1.0	854.32	854.3
5.3	գլ1-1	ավազ տեղական	խմ	2.25	2135.8	4805.5
6.	Ե 17-30	0.15 մ հաստությամբ ավազաշերտ տեղադրված խողովակաշարի վրա	գծմ	25.0	70.18	1754.5
6.1	գլ1-1	ավազ տեղական	խմ	2.25	2135.8	4805.5
7.	1-1634 1-531	ավելցուկային գրունտի հետլիցք հարթեցումով մինչև 80 ձ.ուժ հզորությամբ բուլդոզերով	1000 Խմ 1000 քմ	0.0054 0.2	284200.0 9076.0	284.5 1815.2
		ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱ ՉԱՊԱՏՈՒՄ				
1.	1-1140	հողեպաստառի վերին շերտի աչքաչափով հարթեցում 2-րդ կարգի գրունտում	100քմ	0.8	10878.0	10878.0
2.	27-75	ծաղկանոցների իրականացում 1.0*3.0 մ չափսերով,ըստ կանաչապատման սխեմայի	հատ	6.0	6101.16	36607.0
2.1	գլ2-70	բետոնային եզրաքար 500*200*80 մմ	գծմ	48.0	1799.1	85356.8
2.2	գլ2-24	բետոն թեթև Վ-7.5	խմ	0.46	21179.66	9759.5
3.	11-11 11-106 27-74	սալիկապատում 60 մմ հաստությամբ մայթեզրային՝ երկրորդ շերտը մոխրագույն սալիկներով ա/եզրաքարերը բետոնային՝ 500*200*80 մմ բ/նախապատրաստական շերտը՝ բետոն 5.0*2.0*0.08 մ չափսերով գ/կարաների լցահարդարումը ցեմենտի շաղախով	100քմ	0.1	276230	27623.0
3.1	գլ2-72	բետոնյա սալիկ b=60 մմ,մայթեզրային,երկրորդ շերտը մոխրագույն	քմ	10.0	3915.98	39159.8
3.2	գլ2-27	ծանր բետոն վ-7.5	խմ	0.8	23939.1	19534.3
3.3	գլ2-70	բետոնյա եզրաքար 500*200*80 մմ	գծմ	14.0	1799.1	25187.4
		ընդամենը				1998533
		Շահույթ 10%				199853.3
		ընդամենը				2198386
		Չնախատեսված ծախսեր 2%				43967.7
		ընդամենը				2242353
		ա.ա.հ. 20%				448470.7
		ամբողջը				2690823

Կազմեց Ս.Բեյբության

ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Քուչակի վարչական տարածքի մանկապարտեզի ցանկապատման,տարածքի բարեկարգման և արտաքին կոյուղու կառուցման աշխատանքների

1.Նախահաշիվը կազմված է աշխատանքային հատակագծերի և սխեմաների հիման վրա, ՀՀ կառավարության 23.06.2011 թ N 879-Ն որոշման համաձայն

2.Հաշվարկման համար հիմք են հանդիսանում 1984 թ ՇՆԿ գները և նորմերը,որոնց վրա կիրառվել են 2020 թ փետրվար ամսվա համար ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված հետևյալ գործակիցները

2.1 Հիմնական աշխատավարձի՝ 1.90189

2.2 Մեքենաների շահագործում՝ 2.59321

3.Նյութերի գները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության 2020 թ փետրվար ամսվա ինֆորմացիոն տեղեկագրից,որոնց նկատմամբ կիրառվել է նյութերի տեղափոխման գործակիցը՝ 1.0679

4.Հաշվարկային շահույթը ընդունվել է 10%

5Չնախատեսված ծախսերը ընդունվել է 2%

6.ավելացած արժեքի հարկը 20%

Նախահաշվային արժեքը կազմել է՝ 2690823.0 հհ/դրամ

Նախահաշիվը կազմեց Ս.Բեյբության

ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Քուչակի վարչական տարածքի մանկապարտեզի ցանկապատման,տարածքի բարեկարգման և արտաքին կոյուղու կառուցման

Նախահաշվային արժեքը 2690823.0 հհ/դրամ

Կապալառուն աշխատանքները կատարում է Քուչակ վարչական տարածքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ապարանի համայնքապետարան
Ք. Ապարան, Բաղրամյան 26
ՀՎՀՀ 05022969
ՀՀ ՖԻՆ. Նախ. Գործառնական վարչություն
ՀՀ 900452101158
Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԵԳԱՐՇԻՆ» ՍՊԸ
Ք.Երևան,Բաշինջաղյան փ.165/27
<<Արարատբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 15100149354000
ՀՎՀՀ 01297519
Տնօրեն Ա.Մարտիրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 11 » 08 2020թ. կնքված
ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-38/20 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔՈՒՉԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

<<	Աշխատանք,նյութի նկարագիրը	չ/մ	Քանակը	Միավ. գինը դրամ	Ընդհանուր արժեքը դրամ
1	2	3	4	5	6
	ՀՈՂԱՅԻՆ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1	2-րդ կարգի գրունտի մշակում և տեղափոխում մինչև 20 մ հեռավորության վրա,80 ձ.ուժ հզորության բուլդոզերով	1000 խմ	0,015	180000	2700
2	2-3 րդ կարգի գրունտի մշակում,ավտոմեքենայի վրա բարձումով	1000 խմ	0,035	480000	16800
3	գրունտի տեղափոխում մինչև 2.0 կմ հեռավորության վրա	տն	42	800	33600
	ՄԵՏԱՂԱԿԱՆ ՑԱՆՑԻՑ ՑԱՆԿԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1	3-րդ կարգի գրունտի մշակում ձեռքով 100*0.2*0.15 մ չափսերով, բարձումով ինքնաթափ ավտոմեքենայի վրա	խմ	3	2600	7800
2	գրունտի տեղափոխում մինչև 2.0 կմ հեռավորության վրա	տն	5,1	800	4080
3	մետաղական ճաղացանց,2.0*1.2 մ չափսերով.ե/բետոնյա հենասյուների վրա առանց ցոկոլի, 0.3*0.3*0.45 մ չափսերի փոսերի 3-րդ կարգի գրունտում ձեռքով քանդմամբ և 60*60*2.0 մմ չափսի ուղղանկյուն մետաղական խողովակներից հենասյուների բուտաբետոնով տեղադրմամբ	հատ	54	4800	259200
3.1	մետաղական անկյունակ 40*40*3.0 մմ	գծմ	345,6	750	259200
3.2	մետաղական ցանց 50*50*2.0 մմ	քմ	150	670	100500
3.3	ուղղ.մետաղական խողովակ 60*60*2.0 մմ	գծմ	97,2	1300	126360
3.4	ծանր բետոն Վ-7.5	խմ	1,209	21000	25389
3.5	ամրալար A-1. D=8.0 մմ	գծմ	345,6	140	48384
3.6	փայտանյութ-տախտակ b=25 մմ	խմ	0,0728	125000	9100
3.7	էլեկտրոդ	կգ	14,04	900	12636
3.8	մեխ 40 մմ	կգ	1,24	650	806

3.9	ամրան A 10	տն	0,0235	380,0	8,93
4	բուտաբետոնի տեղադրում 100*0.2*0.15 մ չափերով,նախապես պատրաստված խրամատում	խմ	3,45	4500	15525
4.1	ծանր բետոն Վ-7.5	խմ	1,932	22000	42504
4.2	տախտակ 2.5 մմ հաստության	խմ	0,0897	125000	11212,5
4.3	մեխ 40 մմ չափսի	կգ	3,1	800	2480
5	շարվածք ուղիղ կտրվածքի 400*200*280 մմ տուֆ քարով,մեկ շարքով, 100.0 մ երկարության վրա	քմ	32	1200	38400
5.1	ուղիղ կտրվածքի 400*200*280 մմ չափսի տուֆ քար	հատ	284	310	88040
5.2	թեթև բետոն Վ-7.5	խմ	0,37	20000	7400
6	ճաղավանդակով մետաղական 2.0*1.8 մ չափսերի դռան պատրաստում և տեղադրում,ըստ կից ներկայացվող սխեմայի	տն	0,12	50000	6000
6.1	մետաղական խողովակ 60*60*2.0 մմ	գծմ	5,6	1300	7280
6.1	մետաղական խողովակ 25*25*2.0 մմ	գծմ	20	520	10400
6.2	մետաղական անկյունակ 30*30*3.0 մմ	գծմ	11,6	530	6148
6.3	ծխնի	զույգ	3	1200	3600
6.4	էլեկտրոդ	կգ	1,2	900	1080
6.5	կողպեք դռան	հատ	1	2500	2500
7	մետաղական ճաղավանդակով դռան և մետաղացանցով ցանկապատի յուղաներկում,ձեռքով 2-ու անգամ	քմ	142	450	63900
7.1	յուղաներկ	կգ	34,83	1000	34830
7.2	օլիֆ	լիտ	4,53	750	3397,5
7.3	լուծիչ	կգ	2,83	850	2405,5
	ԱՐՏԱՔԻՆ ԿՈՅՈՒՂՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄ				
1	3-րդ կարգի գրունտի աշակում սրսքև 025 խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով 25.0*0.3*0.6 մ և 2.0*2.0*5.0 մ չափսերով բարձումով ինքնաթափ ավտոմեքենայի վրա	խմ մշակ	15,7	550	8635
1.1	3-րդ կարգի գրունտի աշակում սրսքև 025 խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով 25.0*0.3*0.6 մ և 2.0*2.0*5.0 մ չափսերով բարձումով ինքնաթափ ավտոմեքենայի վրա	խմ բարձ	10,3	450	4635
2	գրունտի տեղափոխություն 2.0 կմ հեռավորության վրա	տն	17,5	800	14000
3	900*900 մմ չափսերի պոլիմերա-ավազային կոյուղահորերից 4.5 մ բարձրությամբ սեպտիկ հորի տեղադրում,պոլիմերա-ավազային կափարիչի 620*65 մմ չափսերի բացվածքի օղակով	հատ	5	350	1750

3.1	900*900 մմ չափսի պոլ/ավազային կոյուղահոր	հատ	5	22000	110000
3.2	պոլիմեր/ավազային կափարիչ 620*65 մմ բացվածքի օղակով	հատ	1	32000	32000
4	սեպտիկ հորի ցանկապատում 2.0մ բարձրությամբ,1.2*2.0 մ չափսերի ցանցավոր մետաղական շրջանակներով,60*60*2.0 մմ չափսի ուղղանկյուն մետաղական խողովակներից հենասյուների վրա և յուղաներկում ձեռքով 2-ու անգամ	քմ	20	2100	42000
4.1	մետաղական անկյունակ 40*40*3.0 մմ	գծմ	52	740	38480
4.2	մետաղական ցանց 50*50*2.0 մմ	քմ	20	650	13000
4.3	ուղղանկյուն մետ.խողովակ 60*60*2.0 մմ	գծմ	20	1200	24000
4.4	ամրալար A-1, D=8.0 մմ	գծմ	52	140	7280
4.5	էլեկտրոդ	կգ	2,6	900	2340
4.6	յուղաներկ	կգ	4,92	1000	4920
4.7	օլիֆ	լիտ	0,64	750	480
4.8	լուծիչ	կգ	0,4	850	340
4.9	ծխնի	զույգ	3	1200	3600
4.10	կողպեք	հատ	1	2500	2500
4.11	ծանր բետոն Վ-7.5	խմ	0,2	21000	4200
4.12	ամրան A 10	տն	0,004	380000	1520
5	D=110 մմ տրամագծով,պատի 2.8 մմ հաստությամբ պոլիքլորիդային խողովակաշարի տեղադրում նախապես փորված խրամատում,0.15 մ շերտի հաստությամբ ավազի վրա	գծմ	25	270	6750
5.1	պոլիքլորիդային խողովակ d=110 մմ , l=3000 մմ,b=2.8 մմ	գծմ	25	750	18750
5.2	անկյունակ պ/քլորիդային 120 0 110*2.8 մմ	հատ	1	800	800
5.3	ավազ տեղական	խմ	2,25	2500	5625
6	0.15 մ հաստությամբ ավազաշերտ տեղադրված խողովակաշարի վրա	գծմ	25	70	1750
6.1	ավազ տեղական	խմ	2,25	2500	5625
7	ավելցուկային գրունտի հետլիցք հարթեցումով մինչև 80 ձ.ուժ հզորությամբ բուլդոզերով	1000խմ	0,0054	250000	1350
7,1	ավելցուկային գրունտի հետլիցք հարթեցումով մինչև 80 ձ.ուժ հզորությամբ բուլդոզերով	1000քմ	0,2	9000	1800
	ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ				
1	հողեպաստառի վերին շերտի աչքաչափով հարթեցում 2-րդ կարգի գրունտում	100քմ	0,8	10000	8000
2	ծաղկանոցների իրականացում 1.0*3.0 մ չափսերով,ըստ կանաչապատման սխեմայի	հատ	6	5000	30000
2.1	բետոնային եզրաքար 500*200*80 մմ	գծմ	48	1800	86400
2.2	բետոն թեթև Վ-7.5	խմ	0,46	21000	9660

3	սալիկապատումն 60 մմ հաստությամբ մայթեզրային՝ երկրորդ շերտը մոխրա գույն սալիկներով ա/եզրաքարերը բետոնային՝500*200*80 մմ բ/նախապատրաստական շերտը՝ բետոն 5.0*2.0*0.08 մ չափսերով գ/կարաների լցահարդարումը ցեմենտի շաղախով	100քմ	0,1	270000	27000
3.1	բետոնյա սալիկ b=60 մմ,մայթեզրային,երկրորդ շերտը մոխրագույն	քմ	10	3800	38000
3.2	ծանր բետոն վ-7.5	խմ	0,8	21000	16800
3.3	բետոնյա եզրաքար 500*200*80 մմ	գծմ	14	1800	25200
	Ընդհանուր				**1852856**
	Շահույթ 10%				**185286**
	Ընդհանուր				**2038142**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ապարանի համայնքապետարան
Ք. Ապարան, Բաղրամյան 26
ՀՎՀՀ 05022969
ՀՀ Ֆին. Նախ. Գործառնական
վարչություն
ՀՀ 900452101158
Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԵԳԱՐՇԻՆ» ՍՊԸ
Ք.Երևան,Բաշինջաղյան փ.165/27
<<Արարատբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 15100149351000
ՀՎՀՀ 01297519
Տնօրեն՝ Ա.Մարտիրոսյան

/ստորագրություն/
Գ.Տ